ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմիի 1

№ 4601-Ա «13» նոյեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի Հ.6748-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 20.08.2025թ. հ.Դ-8893-24 եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի հ.ԳՄ/18283-2025 գրությունը, ինչպես նաև քաղաքացի Սվետլանա Մանուկյանի դիմումները.

1. Երևանի քաղաքապետի 2011 թվականի դեկտեմբերի 21-ի «Ինքնակամ կառույցի օրինականացման մասին» հ.6748-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 2-րդ կետում «անձնագիր AN0652692, տրված 008 կողմից 17.09.2013թ., ծնված 08.10.1963թ., հաշվառման հասցե՝ ք.Երևան, Մալաթիա փ. հ.90/2տուն» բառերը փոխարինել «անձնագիր AL0428232 տրված 001 կողմից 15.09.2023թ., ծնված 08.10.1963թ., հաշվառման հասցե՝ ք.Երևան, Սիլիկյան թաղամաս 7-րդ փողոց, տուն հ.58/9» բառերով,

2) Որոշման 1-ին կետից հանել «կիսակառույց» բառը,

3) Որոշման 2.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.1 Հիմք ընդունելով ՀՀ Երևան քաղաքի ավագանու 10.09.2024թ. հ.204-Ն որոշումով հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի դրույթները՝ սույն որոշման 1-ին կետում նշված 565.19քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:»,

4) Որոշման 4-րդ կետում «աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Վահե Բալասյանին» բառերը փոխարինել «աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով,

5) Որոշման 4-րդ կետում «10-օրյա ժամկետում» բառերը փոխարինել «30-օրյա ժամկետում» բառերով:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ